



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 30 » 11 2020թ.

№ 08/ԼԱ/ - 511

**Նոյեմբերի 23-29-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Նոյեմբերի 26-27-ին՝ առանձին շրջաններում, 29-30-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Կապանում՝ 14,5մմ, Գորիսում՝ 12մմ, Ջերմուկում՝ մնացած շրջաններում 1-4մմ քանակությամբ:

Նոյեմբերի 23-25-ին, 28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը նոյեմբերի 23-27-ին ցածր է եղել նորմայից 1-2, 28-29-ին՝ 2-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 23-ին: Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Տավուշում գրանցվել է +10...+12°C, Սյունիքի նախալեռներում, Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +3...+8°C աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 28-ին: Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում գրանցվել է՝ -7...-12°C (Աշոցքում՝ -16°C), Սյունիքի նախալեռներում, Լոռիում՝ -5...-10 °C (Տաշիրում, 14 °C), Վայոց Ձորի նախալեռներում, Կոտայքի, Արագածոտնի և Արարատյան դաշտում՝ -2...-7°C, Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ 0...-4°C, (Դիլիջան՝ -7°C)

Նոյեմբերի 23-ին Ապարան լճային-ում դիտվել է քամի 5մ/վ, պոռթկումներում՝ 19մ/վ արագությամբ:

Նոյեմբերի 29-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բլ.-ում 32սմ, Պուշկինի լճք-ում՝ 3սմ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել՝ 1900.54մ (29.11.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝  
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան

*Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան*  
Հեռ.՝ 012 31 79 29